

## ՆՈՐ ԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՎՐՈՊԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրատարակվել է Կիրջիլ Ստրոմայերի փոքրածավալ, բայց չափա-  
կանց բովանդակալից գիրքը՝ «Թեղեռ Ամբրոջիոն և նրա փիլիսոփայու-  
թյան հետեւողները» Գիյոմ Պոստելը, Ֆրանչիսկո Ռիվոլան և Կեմենտիս  
Դալանուսը»: Այն սվիրքած է իտալական Վեներածնողի հայտնի արեելա-  
գետ Թեղեռ Ամբրոջիոնին (XVI դ.): Նա, որպես Լեոն Խ պապի խորհրդա-  
կան, ուսումնասիրել է Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժո-  
ռովուրդների եկեղեցիների համապատասխանությունը կաթոլիկ հավատ-  
քին: Գրել է ծավալուն մի աշխատություն՝ «Քաղղերեն, ասորերեն և  
հայերեն, նաև այլ 10 լեզուների ներածություն, մոտ քառասուն զանազան  
տառատեսակներով այբուբեններ և դրանց միստիկ ու կաբբալիստական  
մեկնաբանություն...» (1539) վերնագրով:

Գիրքը բովանդակում է բազմաթիվ հետաքրքրական տեղեկու-  
թյուններ, որոնցից հատկապես ուշագրավ են թվում հետեւյալները.

1) Ամբրոջիոյի աշխատության մեջ առաջին անգամ Արեմուտքի  
ակադեմիական շրջանակներին են ներկայացվել հայերեն, ասորերեն և  
արեելյան այլ այբուբենների: Նմուշներ (կայակոչվել են ֆագոտի առա-  
ջին նկարագրության ասորիթով):

2) Ամբրոջիոյի լեզվաբանական գիտարկումների նպատակը այդ  
այբուբենների և լեզուների կաբբալիստական, խորհրդապաշտական մեկ-  
նաբանությունն է (Վերածնդիր ժամանակաշրջանում տառը համարվում  
էր ավելի առաջնային, քան հնչյունը): Բոլոր այբուբենների հիմքը նա հա-  
մարում է եբրայերենը, և դրա հետեւանքով հայերենի մի շարք բաղաձայն-  
ներ դիտել է ձայնավորների թվում:

3) Մինչև XIX դ. հայերենը համարվել է սեմական լեզու:

4) Ամբրոջիոյի մեջբերած հայերեն տեքստերի հատվածներին բնո-  
րոշ են քարբառային դեռևս լրիվ չմեկնաբանված առանձնահատկություն-  
ներ, իսկ գրանք լատիներեն տառաղարձելիս նա հետևել է արևելահայ ար-  
տասանությանը, քանի որ հայերենի մասին նա տեղեկություններ է ստա-  
ցել Հովհաննես անունով մի թափրիզեցի ազնվականի:

5) Ամբրոջիոյի գրքի պահպանված հատուկներ օրինակների միջև  
(մեկն, ի գեակ, պահպան է Մաշտոցի անվան Մատենադարանում) տեքս-  
տային տաքրերություններ կան: Գիրքը մեկ անգամ չէ, որ շարվել է, և  
որոշ այբուբեններ նրանում ավելացված են ձեռքով: Վ. Ստրոմայերը շա-  
րել է և մանրակրկիտ թվարկել դրանցում առկա տարրերությունները:

Վ. Ստրոմայերը ուսումնասիրել է Ամբրոջիոյի մեզ հասած նյութե-  
րը, որոնք պահպան են հտալիայի Պավիա քաղաքի գրադարանում (մեծ  
մասը ոչնչացվել է, երբ քրանսիացիներն ավերել են քաղաքը). Դրանք,  
ըստ Ստրոմայերի, հայ կաթոլիկ եկեղեցուց են ծագում. այդ նյութերի  
թվում են չորս հայերեն ձեռագիր՝ Աստվածաշնչի հատվածներ պարունա-  
կող երկու ընթերցարան և երկու արժեքավոր ժողովածու, որոնք Արիստո-  
տելի մեկնություններ են բովանդակում:

Ավելի հակիրճ Վ. Ստրոմայերն անդրադարձել է նաև Ամբրոջիոյի  
գործի շարունակողներին՝ Գիյոմ Պոստելին, Շրյոդերին և հատկապես

1 Վ. ի. բ. չ. ի. լ. Ս. ա. բ. ո. մ. ա. յ. ե. բ. Թեղեռ Ամբրոջիոն և նրա փիլիսոփայության  
հետեւողները՝ Գիյոմ Պոստելը, Ֆրանչիսկո Ռիվոլան և Կեմենտիս Գալանուսը. Երևան,  
1999, 82 էջ:

հայտնի կաթոլիկ միսիոներ Կղեմես Գալանոսին: Պոստելն օգտագործել է Ամբրոջիոյի ստեղծած տառատեսակները՝ արևելյան տասներկու լեզուներին նվիրված մի գրքույկ Հրատարակելու համար (1538): Շրյոգերն առաջինն է «Հասկացել» պատմամշակութային ազդեցությունները հայերենի բառապաշտի վրա, ինչպես նաև գրաբարից հստակ զանազանել բարբառները (1711): Կղեմես Գալանոսն իր հայերենի քերականության (1645) մեջ զետեղել է հունարան դպրոցի (V-VIII դդ.) ամենակարևոր հուշարձաններից մեկի՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայերենից լատիներեն իր թարգմանությունը: Ստրոմայերն իրավացիորեն նշում է, որ XVII դարի «լատինարան» ուղղությունը կրել է նախորդ հունարան հայերենի զգալի ազդեցությունը:

Վերջին Ստրոմայերի այս հետաքրքրական գրքույկը կարդալիս ցանկություն է առաջանում ավելին իմանալու հայերենի առաջին եվրոպացի ուսումնասիրողների՝ հատկապես Թեղեո Ամբրոջիոյի մասին, նաև թարգմանված տեսնելու նրա ուշագրավ գիրքը:

**ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ**